ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԵՎ ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ

Հայաստանի Պետական Տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղը (**այսուհետ՝ բուհ**), ի դեմս մասնաճյուղի տնօրեն Կարեն Պետրոսյանի, մի կողմից, և «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամն (**այսուհետ՝ Համալսարան**) ի դեմս ռեկտոր Երվանդ Սերոբյանի, մյուս կողմից (**այսուհետ երկուսը միասին՝ Կողմեր**), կնքեցին սույն համաձայնությունը (**այսուհետ՝ Հուշագիր**) հետևյալի մասին.

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Սույն Հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել Հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն Հուշագրով համագործակցության շրջանակներում Կողմերը պայմանավորվում են մեկտեղել իրենց ջանքերը, միջոցներն ու փորձը և գործակցել հետևյալ ուղղություններով՝

2.1.պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի վերապատրաստում,

2.2.ուսանողների մասնագիտական ուսուցում,

2.3.երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող, ուսումնակրթական բնույթի ծրագրերի, այդ թվում՝ համապատասխան ոլորտներում փորձաքննությունների իրականացում, մասնագիտական գրականության, մեթոդական ձեռնարկների, աշխատությունների, պարբերականների և այլ նյութերի փոխանակում,

2.4.համատեղ աշխատանքային խմբերի ձևավորման և Կողմերի լիազորված աշխատակիցների միջոցով փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկում և լուծում,

2.5.համատեղ գիտաժողովների, սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպում և անցկացում,

2.6.ազգային և միջազգային ծրագրերի և հիմնադրամների կողմից ֆինանսական աջակցություն ստանալու համար համատեղ նախագծերի մշակում,

2.7.նորարարական, դրամաշնորհային ծրագրերի համատեղ իրականացում,

2.8.կողմերի գործունեությանն առնչվող համապատասխան նյութերի հրատարակում,

2.9.սույն Հուշագրի գործողության շրջանակներում Կողմերի գործառույթների կատարման համար, ըստ աշխատանքային անհրաժեշտության, մարդկային, նյութատեխնիկական և այլ ռեսուրսների տրամադրում,

2.10. համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվության հայցում և ստացում,

2.11. Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում Կողմերի գործունեությանը և մասնագիտացմանն առնչվող գիտագործնական, ինչպես նաև մասնագիտական և կազմակերպական բնույթի այլ ուղղություններով համագործակցություն:

Հուշագրի դրույթներից բխող աշխատանքների բնույթի, ծավալի և այլ անհրաժեշտ գործողությունների հստակեցումը Կողմերը կկատարեն Հուշագրի շրջանակներում առանձին փաստաթղթեր կազմելու և հաստատելու միջոցով:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կողմերը պարտավորվում են սույն Հուշագրում նշված նպատակներին հասնելու համար գործադրել իրենց ջանքերը՝ անհրաժեշտության դեպքում տեղեկատվության, գիտելիքի, փորձի ու հմտությունների փոխանակմամբ, ինչպես նաև մասնագիտական հանձնախմբերի ստեղծմամբ, այլ անձանց և կազմակերպությունների հետ համագործակցությամբ և այլն:

Կողմերը պարտավորվում են ձեռնարկել բոլոր միջոցները սույն Հուշագրով ստանձնած իրենց պարտականությունները բարեխղճորեն, Կողմերի միջև համաձայնեցված ժամկետներում կատարելու համար:

Հուշագիրը Կողմերի համար որևէ լրացուցիչ ֆինանսական պարտավորություն չի առաջացնում:

4. ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի հաստատման պահից և գործում է անորոշ ժամկետով:

Հուշագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ և համարվում են դրա անբաժանելի մասը:

Սույն Հուշագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ենթադրվող դադարեցման օրվանից ոչ ուշ, քան 1 (մեկ) ամիս առաջ մյուս Կողմին գրավոր ծանուցմամբ:

Սույն Հուշագիրը կնքված է հայերեն լեզվով, հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկ օրինակ:

ԿՈՂՄԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղ	***«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ***
Հասցե՝ ք.Գյումրի, Վ. Սարգսյան 32	*Հասցե՝ ք. Գյումրի, փ. Պ. Սևակի 4*
Հեռ՝(+374 312) 3 58 44	*Հեռ.՝(+374 312) 2 66 00*
Տնօրեն՝ Կարեն Պետրոսյան	*Ռեկտոր՝ Երվանդ Սերոբյան*
Կ.S.	Կ.S.

10 մայիսի, 2023թ. ք. Գյումրի